

# Պ. ՎԵԼԻԶԿՈՒ ԵՒ ՀԱՅԱՏԵՑՈՒԹԻՒՆԸ

## I

ՎԵԼԻԶԿՈՒ ԺԿԱՅՐ... այսպէր էր նոր տարւայ այն կարեռը նորութիւն-շնորհաւորութիւնը, որ տալիս էին միմեանց ոչ միայն հայերը, որոնց Կովկասեան «գրական Արակէէեւը» գրական խժդժութիւնների առարկայ էր ընտրել, այլ և ուրիշ ազգութիւններից անձեր, որոնք անկեղծաբար թանկ են համարում ոռւսաց կուլուրայի յաջողութիւնները Կովկասում և որոնք մեր «իսարասիրու դարում» չեն կորցրել մարդկայնութեան և եղբայրական համերաշխութեան զգացմունքները: — Պէսք էր այս վերջին երեք տարիները (1897—1899) ապրած լինել Կովկասում, պէսք էր պ. Վելիչկօ՛ի խմբագրած կիսապաշտօնական «Կավկազ»-ի ընթերցումից ամեն օրւայ բանջանքն զգացած լինել՝ հասկանալու համար այն հոգեկան թեթևութիւնը, որ պիտի զգան տեղացիները, գեսնելով Կովկասեան գրական հորիզոնը ազագւած այդ չարագուշակ ասուպից: Զարախնդութիւնը և ֆաքտերի տղաւաղումը, ամենայարգելի զգացմունքների վիրաւորումը, սիստէմ դարձրած սուփն ու գրպարտութիւնը հայերի դէմ—սկսած պարմական արձանագրութիւնները կեղծելու մեղադրանքից և վերջացնելով ուղղակի մարդնութիւններով նոցա նւաճողական և թշնամական ձգութների վրայ Խուսասրանի դէմ—այսպէս էին երեքամեայ գրգռման ամենօրեայ թեմաները արդարին հեղինակութիւնից ոչ-զուրկ «Կավկազ»-ի կողմից: Առաջնորդովը և ֆելիքսոնը, պրոզան և ուրանաւորը, ժողովրդական աղէտը կամ ընդհանուր ուրախ ցնծութիւնը—ամեն ձեւ ու առիթ տեղին էին համարում: օր օրի վրայ զանազան ჩինոկների, Զիգիֆրների և այլ այդպիսի յարդելի արշաւողների գրչով աղացուցելու համար թէ

հայերը կային և մնում են աշխարհի ամենասպոր և վնասակար ազգը, — չարձիների ազգ, որին Խուսասրանը եթէ չոչնչացնէ էլ, գոնէ պիտի դուրս քշէ Կովկասից, իսկ մինչև այդ՝ փակէ նոցա Դպրոցները, ոչնչացնէ այն ռուս լրագիրները, որոնք յանդգնում են ռուսաց բառերով ծառայել ոչ-ռուսական գործին (?), այսինքն յանդգնում են վիճել պ. Վէլիչկօի հետ, պաշտօնեաների զեղծումները մերկացնել և այլն։ Անհնարին է մի առ մի թւել «Կավկազ» ի բոլոր արարքները, որը հասաւ նոյն իսկ այն մեղադրանքին թէ հայերը կազմակերպում են Կովկասեան աւազակութիւնը, — որից, ասենք ի Դէպ, ամենից շաբ իրենք են վնասում, — անկարելի է թւել զործ Դրած բոլոր անարժան միջոցները. բայց մէկը, որ ամենից շաբ բմարդին է, չի կարելի չըլիշել առանձնալէս։

Ինչպէս յայգնի է, անցած երեք չորս տարիները ամենաթը շւառն էին հայերի առանց այդ էլ սարսափներով հարուստ պար-մութեան համար։ Նլուր զազանութիւնները, որ կարարեցին թիւր-քերը հայերի վրայ, բնական կարեկցութիւն զարթեցրին Կովկա-սեան հայերի մէջ։ Եթէ բոլորովին օրար մարդիկ ցնցւում էին կարդալով մարսիրոսագրութեան նկարագրութիւնը, այդ անօրինակ կործանումի, որի նմանը, ինչպէս ասում է Լըրուա-Քոլիէ, չի ցի-շում պարմութիւնը, — հապա ինչ պիտի զգային Կովկասեան հա-յերը, որոնք երենց աչքով տեսնում էին բմարդի զազանութիւն-ների հրաշքով ողջ մնացած դժբաղդ զոհերին, այդ սոված, բանջ-ւած փախարականների խմբերը՝ կրած տանջանքների նշաններով։

Հայերից ամենաաջարմարները և ամենաքարասիրդները շոս-պում էին անհարապէս և հաւաքական կերպով թեթևացնել դանչ-ւոլների վիճակը։ Եւ ճակարագրի ջախջախսածների Դէմ բարձրացաւ պ. Վէլիչկօի ձեռքը! Եւ հէնց այդ վայրկեանը զկաւկազ, լրագիրը ամենայարմարը համարեց, որպէս զի ամեն օր բոլոր հա-յերի գլխին մեղադրանքներ թափէ սեպարարիզմի, Կովկասը հարս-ուրահարելու և ամեն դեսակ փորձանքների համար։ Պ. Վէլիչկօի և մայրաքաղաքային մամուլի մէջ նորա համախոհների ջանքերը ապար-դիւն չանցան։ Նոցա բարածած մառախուղը այժմ անհաւագրալի թւացող հետեւանքներ ունեցաւ, այն է խղճուկ հայ զիւղացիները մի ժամանակ հալածանքի էին ենթարկւում քիւրդերի դանակից

գիախած հայերին օգնութիւն հասցնելու համար 1: Եւ այդ սիստեմական վիրաւորանքը, որ նա հասցնում էր, ի դէմն հայերի, մարդկացին հոգու շարժումներից ամենանւիրականին՝ անշահասերսէրին դէպի մերձաւորը՝ շարունակում էր «Կաւկազ»ը, կարելի է ասել, մինչև ալ Վելիչկօի հրապարակախօսական «Ճառայութեան» վերջին օրը: Դեռ նոյեմբերին նա բարձրաձայն յայսարարում էր, ի գոհունակութիւն «Մօք. Եֆ.» լրագրի, որ Թիւբքիան վաղոց խաղաղացւած է, և որ ցուցմունքները հայերի թշւաւութեան վրայ «հարում են հայ թշվակիցները... Այդպէս վիրաւորել և ջիգբացնել, հայրենասիրական անխոցելիութեան հովանու գակի, երեք փարի անընդհատ... Ի՞նչ նպատակ կարող էր լինել այդորեղ: Թող հայերը չարավնաս ժողովուրդ լինեն: Բայց որ խելացի քաղաքագէորը, վարչական անձը կամ հրապարակախօսը խորհուրդ կը դրայ կուել նոցա դէմ քիս-քիս անելու, ամենօրեայ վիրաւորանքի և նեարդերի գրգռման միջոցով:

Ճշմարիտ, կարելի է անհիմն համարել մի քանիսների գուշակութիւնը այն բանի մասին, թէ «Կաւկազ» լրադրի խմբագրի նպատակն էր առթել բանութեան որ և է անմիտ գործողութիւն որ և է տաքդլուխ երիտասարդ հայի կողմից և դորա վրայ ամրացնել իւր համար հայրենիքը փրկողի պատւանդանը:

Բայց, բարեբալլաբար, այդպիսի անմրութիւն գոելի չունեցաւ: Բանաստեղծ-հրապարակախօսը հեռանում է «Կավказ»-ի խմբագրութիւնից ողջ առողջ, ֆիզիկապէս: Բայց որպիսի փոփոխութիւն երեք փարւայ մէջ ուրիշ կողմերից: Պ. Վելիչկօն ոչ միայն բանաստեղծութեան մէջն է այրում «քաղաքացիական մոտիւները», այլ և հրապարակախօսական ծրագրի մէջ փոխում է ֆրոնտը: Շատթւնց է արդեօք, որ, սկսելով «Կավказ» լրագրի խմբագրութիւնը 1896 թւին, նա հաւաքում էր աշխատակիցներ լրագիրը արդարութեան և Խուսաստանը բնակող ժողովուրդների եղբայրական համերաշխութեան ոգւով վարելու համար: Եւ թէ նաւական էր մայրաքաղաքին մամուլի Եկշխովսկիների կողմից մի թեթև ձայն, որ նա, «Կավказ» լրագիրը վարելու երկրորդ ամսից արդէն իւրացնէր

<sup>1</sup> Տես «Սպբ. Եֆ.» 1897 թ. № 203.

նոցա մարդագեցական ծրագիրը և հասցնէր այն մինչև կափազութեան վերջին աստիճանը: Հայերը, ինչպէս և ամեն ուրիշ ժաղավորդ, ունին իրենց արժանաւորութիւնները և իրենց պակասութիւնները թող մինչև անգամ վերջինները աւելի շատ լինեն նոցամէջ: Մարդ խստասրբութեան մրայիսի աստիճանին հասած պէտք է լինի, որ, երեւակալսկան և իրական պակասութիւնները մերկացնելու համար, ամենօրեայ անդադրում գրգռման համար իրր վայրկիանընորքէ հէնց ընդհանուր ազգային վշտի ցնցող ժամանակը, որի միջոցին, թէ անհարական և թէ հաւաքական անձնաւորութեան համար՝ բարի խօսքը մանաւանդ միմիթարական է, իսկ պարսաւանքը, ըլխօսելով արդէն զրպարփութեան մասին, մանաւանդ վիրաւորական է և դառն: Համարեա ամեն մի համարում պահանջելով վոնդել Ռուսիայից պատառողուն փախստական հայերին, ոլ. Վէլիչկօն իւր զրիչը այնուել հասցրեց, որ աշխագում էր իւել Դժբաղդ որբերի բերանից մի կոսոր չոր հացը, ելքայրական օգնութեան մաքուր և սուրբ գործը հրարարակելով վնասակար: Վերջապէս և ամենավերջինը, ընական դժբաղդութիւնը Ախալքալակի գաւառում, որ թաղեց հայաբնակ հինգ գիւղերի աւերակների մէջ մի քանի հարիւր մարդ և մուրացիկ դարձեց մի քանի հաղար աշխագուռներ, նոյն իսկ այս սարսեցնող աղէսը, որ զեղի ունեցաւ Թիֆլիսից երկու քայլ հեռու, ըլմեղմացրեց «Կավказъ»-ի շարութիւնը: Ընդհակառակն, այդ աղէսը առիթ ուեց ոլ. Վէլիչկօնի սրբագլծաբար խառնել իւր հին հայագեցութեան հետ և... նոյն սրբագլծաբար խառնել իւր հին հայագեցութեան ձեռքը!! Սա արդէն լցրեց բաժակը և իսկական լոյսը դցեց խմբաղիր ոլ. Վէլիչկօն հրազարակախօսական դէմքի վրայ, որը ներկայացաւ իւր զազանացած մարդագեցութեան ամբողջ մերկութիւնովը (=in naturalibus):

## II

Ո. Վէլիչկօն անհերացաւ կովկասեան հորիզոնից, բայց հերքերը կամ աւելի ճիշդը, վերքերը, որ նա թողել է, դեռ զոյսւթիւն ունին: Անվսկսհութեան, գրգռածութեան, ցեղական թշնամութեան և փոխադարձ նախապաշտմունքի սերմերը մնացին: Սական, ոլէոք է յուսալ, որ նոքա երկարագուե չեն լինիլ: Զարութիւնը

Երկարակեաց չէ։ Մի փոքր բարի կամքով էլ շատ հեշտ կարելի է բռուժել և ուղղել բալորը, ինչ փճացած է այ. Վելիչօի ոգով, հակառակ՝ ոռոսաց պատմութեան դարաւոր աւանդութիւններին։ Հարկաւոր է միայն մի փոքր առողջ միտք, գիտութիւն հայերի պատմութեան և բնաւորութեան՝ որպէս զի կարելի լինի պարշաճաւոր կերպով գնահատել նոցա թշնամիների և թիւբքաց քաղաքական գործակալների դարածած այն առասպելլ՝ թէ հայերը ուղում են վերականգնել Մեծ Հայաստանը և կուր մշել Խոս սաստրանի դէմ Դեռ ոչ ոք չի ուրացել, որ հայերը գործնական խելք ունին, և այդ պատճառով ծիծաղելի է մեղադրել նոցա թէ նոքա թշնամական պլաններ ունին Խուսաստանի դէմ և թէ ձգուում են ձեռք բերել քաղաքական զօրութիւն, որ նոքա չեն ունեցել ամենահին ժամանակներն անգամ, և մանսաւանդ չըկաց այժմ, երբ կազմակերպում են վիթխարի կայսրութիւններ, որոնց հետ համեմատելով այսպէս անւանւած Մեծ Հայաստանը, որպէս Մեծ Յունաստանը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ պիդմէ։

Կորչրած անկախութիւնը վերականգնելու միտքը դեռ կարող է երերւել այն ազգութիւնների մէջ, որոնք այն նոր են կորցրել, բայց ոչ թէ հայերի մէջ, որոնք համարեա հազար տարուց առաջ են կորցրել իրենց քաղաքական կեանքը։ Ասել թէ՝ բաք զլու խպարանի-երեակայտներից ոմանդ մէջ դորա նման մի ֆանգէզի չի ծագում,—ի հարկէ, չի կարելի։ Բայց ենթադրել, թէ մի այդ պիսի ցնորք կարող է գրաւել լուրջ հայերին, որոնք որ և է կշիռ ունին իրենց ցեղակիցների մէջ,—այդ նշանակում է ամենելին ծանօթ չըլինել հայերի մեծամանութեան տրամադրութեանը։ Այդ պարզ ճշմարտութեան անրես առնելն է հէնց սփեղծում հայատեցութիւնը, որ հասցնում է մի քանիսներին, ինչպէս պ. Վելիչօին և նորա համախոհներին, կապարեալ խելագարութեան, իսկ ուրիշներին—թշնամուկան կասկածութեան, որ վնասակար է թէ հայերին և թէ ոռոսաց կուլուրացին Սրեելքում։

Լեզւի և կրօնի, այդ աւելի քան տասն և հինգ դարի սրբութեան պահպանումը,—ահա հայկական ազգային գաղափարի ալֆան և օմէգան։ Եւ մինչև այդ բանը չըհասկանան մեր քաղաքագէտները և գործող մարդիկ, անխուսափելի կը լինին մեքենայաբար ոռու-

սացնելու դեղագոմսով արած խոշոր սխալները, որոնց հետեւանք ները, ծանր լինելով հայերի համար, վնասակար կերպով են արգա- ցոլում նաև ռուսաց շահերի վրայ Արեւելքում:

Ժամանակ է վերջապէս հասկանալ վերջին բարիների սխալը, որովհետեւ անցքերը այժմ բաւական սրազ են ընթանում: Պրօֆէ- սոր Գերիէն Շուռասարանի կոչումը Արեւելքում վերնագրով իւր մի յօդւածի մէջ (Փ. Երակա Պոմոց գրքի երկի. Հրատարակութիւնը) ակներեւ ցոյց ոււեց, թէ ինչպէս լաւ է հասկացել պրուսաց Ռուբախը այն օգուգը, որ Ռուսասրանը սրացաւ հայերից, որոնք Պետրոս Մեծի ժամանակից ընդելացել եին ռուսաց կուլուրան առաջ դանողների դերին Արեւելքում: Պարսկասրանի և Միջին Ասիայի վրայ ներգործելու միջոցով Միենոյն գիտնական ճանապար- հորդը ոչ պակաս պարզութեամբ հասկացաւ այն դերը, որ վիճակ- ած է խաղալ հայերին Փոքր-Ասիայի առաջիկայ նւաճման ժամա- նակ: Այդ հարցին նա նորերս մի առանձին յօդւած նւիրեց «Preus- sische Jahrbücher» յայտնի ամսագրի մալիսեան գրքի մէջ: Մար- նացոյց անելով այն խոշոր բնիքնական շահերի վրայ, որ գերմանա- կան արդիւնաբերութիւնը և առևտուրը շուրջով պէտք է ձեռք բե- րեն Փոքր-Ասիայում, պ. Ռուբախ աւելացնում է, որ գերմանացինե- րի և տեղական թիւրք ազգաբնակութեան մէջ բնական և անխուսափելի միջնորդները հայերն են լինելու: «Նեռ շար ջուր կ'անցնի Եփրատի մի, ջով, — գրում է նա, — նախ քան թիւրքը վաճառական և արդիւնա- բերող կը դառնայ. իսկ մինչև այդ ժամանակ, խելացի, փորձեած, կրթւած հայերը, գիտենալով գերմանական և ուրիշ լեզուներ, ան- խուսափելի կերպով պէտք է միջնորդներ դառնան նւրոպացի և Փոքր-Ասիայի մէջ: Ի նկարի ունենալով այդ, պ. Ռուբախը առաջար- կում է Գերմանիային օգուգ քաղել թէ հայ որբերի համար հիմն- ած ապասրարաններից և թէ ուրիշ հիմնարկութիւններից, որ- պէս զի հայերից պատրաստւեն գերմանական կուլուրայի անփո- խարինելի փարածողներ»<sup>1</sup>: Sapienti sat...

<sup>1</sup> Յիշւած պ. Ռուբախը նոյն անձն է, որի անունը ալնքան լաճակ- քրւում է Մուրձում այժմ ուպւու (Գերմանական օգնութիւնը Տաճկա- հա- չերինո յօդւածում):

Աւելորդ չի լինիլ մեր կուրացած հայակերների համար, — ևթէ ոչ արդարութեան զգացմունքից, գոնէ Ռուսասփանի շահերի ուերակէտից — աւելի հանգիստ և խելացի կերպով քննութեան առնել հայերի դրութիւնը և դերը Կովկասում և Անդրկովկասում։ Այդպետք մինչև անգամ զիւր անելու հարկ չըկաց։ Այն բանի վրայ, ինչին նոր միայն ձգուում է Գերմանիան, վաղուց արդէն ընկել է Պետրոս Մեծի արծւացին հայեացքը, որը լաւ էր հասկացել, թէ անկարելի է իրագործել Ռուսասփանի համաշխարհային կուլտուրական միսսիան Արևելքում, նայելով իրերի վրայ և Մոսկովեան բացառիկութեան և անհամբերողութեան։ Նեղ ճեղքով, Մահմեդական աշխարհի դէմ կուելու համար նա, որպէս բնական դաշնակիցների, հրաւիրեց Արևելքի միակ քրիստոնեաներին — պարսկա-հայերին, որոնք առաջինն էին, որ առևելուր սկսեցին Կասպից մահմեդական ծովափի վրայ։ Նոյն բանն արտւ և Կարարինէ Ա-ը Սև ծովի մահմեդական ծովափի վերաբերմամբ, ուր հրաւիրւեցին երկրագործներ և վաճառականներ թիւրքաց Հայասփանից։ Մի խօսքով, թէ աւելի հեռաւոր, և թէ մերձաւոր պատմութիւնը ցոյց է տալիս, որ Ռուսասփանը ցանկացած ժամանակ կարողանում էր հայերից օգտակար և հաւատարիմ հպատակներ շինել և իւր աղղեցութեան վարածողներ դարձնել Արևելքում։ Եթէ Նոքա միենոյն ժամանակ պահպանեցին իրենց կրօնը և մասամբ լեզուն, դրա մէջ միայն չար և կուրացած միջացելացին անհամբերողութիւնը կարող է ինչ-որ վնասակար և մինչև անգամ Ռուսասփանի համար վրանգաւոր մի բան գեսնել... Ինչ վերաբերում է ուռւաց լեզւի նշանակութեանը, չխօսելով արդէն ունեսօր դասակարգերի մասին, որոնցով լցւած են բոլոր Դպրոցները Կովկասի քաղաքներում, հայերի մինչև անգամ վերջին սերունդների սրորին դասակարգերը բոլորը մի կերպ խօսում են ուռւերէն։

Գիւղերում, Դպրոցների պակասութեան պատճառով, ուռւաց լեզուն աւելի քիչ է Փարածւած, իսկ այժմ հայոց ծխական Դըպրոցների փակւելուց յեպոյ 1896 թւին, որդեղից 20,000-ից աւելի երկու սեսից աշակերդներ հեռացւեցին, ուռւաց լեզւի դարածումը, ի հարկէ, պէտք է դանդաղանայ, և ոչ թէ արագանայ՝ յանկիղծ ցաւ հայերի։ Կովկասը լաւ ճանաչողներից մէկը հաւատացնում էր, որ

եթէ մինչև անդամ հայերին արգելէին ռուսաց լեզուն ուսանել, նոքա զաղցնի կերպով կը սովորէին, այնքան զօրեղ է նոցա մէջ սիերական լեզուն գիտենալու անհրաժեշտութեան և օգուտի համոզունքը: Եւ ահա այդպիսի արթուն գործնական-հայերին կովկասի նորայայտ ճանաչողները համարում են ռուսաց լեզուն սովորելուց խուսափողներ՝ միայն այն պարմառով, որ գիւղական ազգաբնակութեան զանգւածը (ինչպէս յայրնի է, Կովկասում հայոց ազգաբնակութեան 80 տոկոսից աւելին զիւղացիներ են) չգիտէ ռուսերէն, որովհերեւ ինչքան էլ նա ցանկանայ, բեղ չունի սովորելու, Դպրոցների բացակայութեան պարմառով:

Ժամանակ է, ժամանակ ազգարնակութեան համար պարզելվերջին ժամանակների թիւրիմացութիւնները, որոնց եթէ չեն սրել-ծել, դոնէ սաստիցըրել են կարճափես ռուսինչօրպաշտօնեանները և պ. Վելիչկօի նման հայարեաց հրապարակախօսները, որոնք քիչ վեստական և վիշտ չեն պարմառել հայերին... և ոչինչ օգուտ Խուսափանին: Այդ շարավնաս մառախուղի ցրւելը պահանջում են թէ արդարութիւնը և թէ Խուսիայի օգուտը:

ԳՐ. Ա. ՄԻՐՈՎ.

„Ը. Պետերբուրգskія Вѣдомости“.

1900, № 17.